

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----» ----- 2020թ.

N ----- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման N 1 հավելվածի «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «1. Վարչություններ» գլուխը լրացնել նոր 14.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ.

«14.1) երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն».

2) ուժը կորցրած ճանաչել որոշման N 1 հավելվածի.

ա. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «1. Վարչություններ» գլխի 14-րդ կետը և «3. Բաժիններ» գլխի 3-րդ կետը.

3) Որոշման N 2 հավելվածում՝

ա) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Սոցիալական ապահովության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն				
1	վարչության պետ	1	346000		346000
2	գործավար	1	164000		164000
-	Երեխաների պաշտպանության բաժին				
1	բաժնի պետ	1	291000		291000
2	գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող	1	225000		225000
3	գլխավոր մասնագետ - իրավաբան	1	225000		225000
4	գլխավոր մասնագետ - հոգեբան	1	225000		225000
5	առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող	1	219000		219000
6	առաջատար մասնագետ	1	219000		219000
7	առաջին կարգի մասնագետ	1	207000		207000
-	Սոցիալական պաշտպանության բաժին				
1	բաժնի պետ	1	291000		291000
2	գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող	1	225000		225000
3	գլխավոր մասնագետ - իրավաբան	1	225000		225000
4	գլխավոր մասնագետ - հոգեբան	1	225000		225000
5	առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող	1	219000		219000
6	առաջատար մասնագետ	1	219000		219000
7	առաջին կարգի մասնագետ	1	207000		207000
	ԸՆԴԱՄԵՆԸ	16			3732000

բ) ուժը կորցրած ճանաչել «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին» գլուխը:

գ) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «593.5» և «141421550» թվերը փոխարինել համապատասխանաբար «594.5» և «141516550» թվերով:

դ) «Ամբողջը» տողում «2132.5» և «463632350» թվերը փոխարինել համապատասխանաբար «2133.5» և «463727350» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) անհրաժեշտությունը պայամանավորված է հետևյալով.

Սոցիալական պաշտպանության համակարգը կյանքի տարբեր փուլերում ապահովում է՝ սոցիալական ռիսկերի առաջացման կանխարգելումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց աջակցումը, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և աղետների հետևանքով առաջացած ռիսկերը հաղթահարելու միջոցառումների իրականացումը: Երևան քաղաքն առանձնանում է սոցիալական խնդիրների լուծման ծավալով, հրատապությամբ, շահառուների առանձնահատկություններով, սոցիալական պաշտպանության մարմինների ու կազմակերպությունների բազմազանությամբ: ՀՀ կառավարության 2019-2023թթ. ծրագիրը նոր առաջնահերթություններ է նախանշել սոցիալական պաշտպանության ոլորտում, որոնք ուղղված են քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավմանը, սոցիալական իրավունքների լիարժեք և արդյունավետ իրացմանը՝ հիմնված հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերման սկզբունքի վրա: Այս առաջնահերթությունների իրականացման համար Երևան քաղաքում անհրաժեշտ էր ստեղծել երեխայի և սոցիալական պաշտպանության արդյունավետ կառավարման համակարգ, որը արտացոլվել է Երևանի զարգացման 2019-2023 թթ. ծրագրում:

Ելնելով վերոնշյալից՝ Երևանի քաղաքապետարանի պատվերով ձևավորված փորձագիտական թիմը, ՅՈՒՆԻՄԵՏԻ ու Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունների աջակցությամբ, 2019թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին իրականացրել է Երևան քաղաքի սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ հետազոտություն, որի նպատակն էր աջակցել Երևան քաղաքի՝ երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում համակարգի բարեփոխումներին՝ առաջարկելով գործուն մեխանիզմներ ուղղված Երևանի քաղաքապետարանում կառավարման կառուցվածքային անցնցում փոփոխություններին, տեղական մակարդակում նշված համակարգի արդյունավետության բարելավմանը, բազմակողմանի համագործակցությանը, ինչպես նաև համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացմանն ու տեղական սոցիալական պլանավորմանը:

Հարկ է նշել, որ Երևանի քաղաքապետարանը պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում իրականացնում է սոցիալական համալիր ծառայությունների կազմակերպումն ու իրականացումը, առանձնացված ստորաբաժանում հանդիսացող տարածքային մարմինների՝ Սոցիալական աջակցության տարածքային բաժինների (այսուհետ՝ ՍՍՏԲ) միջոցով: Սակայն ՍՍՏԲ-ների ենթակայության փոփոխության գործընթացն ընթացքի մեջ է և մինչև սույն թվականի սեպտեմբեր ամիսը նախատեսվում է ամբողջությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ անցնել: Հաշվի առնելով ՍՍՏԲ-ների ենթակայության փոփոխությունը, ինտեգրված սոցիալական ծառայությունների բարեփոխումները, ապակենտրոնացմանն ուղղված գործընթացները, ինչպես նաև համայնքի սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացումը՝ անհրաժեշտ էր վերանայել Երևան քաղաքի սոցիալական պաշտպանության համակարգը, ինչպես նաև հստակեցնել

համայնքին վերապահված լիազորությունների տիրույթը՝ դարձնելով այն ավելի արդյունավետ, կարիքների վրա հիմնված և համահունչ կառավարության սոցիալական պաշտպանության նպատակներին:

Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության գործառույթները լուրջ սոցիալական են և այդ գործառույթներն իրականացվում են անձի և ընտանիքի հետ աշխատելով, և քանի որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի համաձայն՝ երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից, դա ենթադրվում է, որ վարչությունը սոցիալական գործառույթներ իրականացնելիս նույնպես պետք է առաջնորդվի երեխայի լավագույն շահով: Այս հանգամանքը կարևորվում է Երևանի քաղաքապետարանի երկու ստորաբաժանումների՝ սոցիալական ապահովության վարչության և ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնի աշխատանքները փոխկապակցված դարձնելու գործընթացում:

Ինչ վերաբերում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնին, ապա այն իրականացնում է բազմաթիվ գործառույթներ, որոնք մեծամասամբ ակնհայտ սոցիալական բնույթի են և համադրելով Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության գործառույթների հետ՝ հանդիսանում են նախապայման սոցիալական պաշտպանություն տրամադրելու համար, ինչով և որոշվում է այս երկու ստորաբաժանումների փոխգործակցության առաջնայնությունը:

Կարևոր է նաև ընդգծել խնամակալության և հոգաբարձության մարմինների (այսուհետ՝ ԽՀՄ-ներ) և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (այսուհետ՝ ԽՀՀ-ներ) միջև համագործակցությունը՝ նախատեսելով համագործակցության հստակ մեխանիզմներ, ինչը խիստ կարևոր է հաշվի առնելով, որ ԽՀՄ-ներում և ԽՀՀ-ներում քննարկվող տարաբնույթ հարցերը վերաբերելի են տարբեր վարչական շրջաններին, փոխկապակցված են, ինչպես նաև պայմանավորված են միջհամայնքային համատեղ աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությամբ: Այսպիսով, պետք է նախատեսել հոգեբանի և սոցիալական աշխատողի հաստիքներ ԽՀՄ-ում՝ այդ մասնագետների կողմից ԽՀՀ-ից պատշաճ աջակցություն ցուցաբերելու նպատակով: Ինչպես նաև կարևոր է, որ ԽՀՀ քարտուղարը լինի ոչ թե հասարակական հիմունքներով գործող ԽՀՀ անդամ, այլ նրա հաստիքը պետք է նախատեսված լինի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական բաժնում, և նրա լիազորությունները պետք է նախատեսված լինեն համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրով:

Համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումն ու զարգացումը կարևոր է ոչ միայն Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչությունում, այլ նաև Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնում, որը միանշանակ բխում է երեխայի լավագույն շահերից: Երեխայի հիմնախնդիրների լուծումը և պաշտպանությունն ուղղակիորեն պայմանավորված է ընտանեկան այն պայմաններով, որտեղ գտնվում է երեխան, և առանց ընտանիքի հետ պատշաճ աշխատանք իրականացնելու դրանց արդյունավետ իրականացնելն անհնարին է:

Սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրմամբ սոցիալական ոլորտում տեղի են ունենալու փոփոխություններ, որոնք հանգեցնելու են սոցիալական կարիքի գնահատման հիման վրա հասցեական սոցիալական ծառայությունների տրամադրում: Առաջարկվող նոր համակարգի կազմավորումը, նախատեսում է հաստիքների ավելացում, մասնավորապես՝ սոցիալական աշխատողների, ինչպես նաև հոգեբանների, քանի որ սոցիալական խնդիրների առկայությունը հանգեցնում է բազմաթիվ հոգեբանական խնդիրների, որոնց լուծման համար սոցիալական աշխատողը շահառուի հետ աշխատանքներում, անհատական սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագիր կազմելիս ներգրավելու է նաև հոգեբանի:

Այսպիսով, կառուցվածքային փոփոխության արդյունքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության, ինչպես նաև ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի փոխարեն ձևավորվում է նոր Երևան համայնքի սոցիալական պաշտպանության կառավարման համակարգ՝ ի դեմս Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն):

Վարչությունը նախատեսվում է ստեղծել 16 հաստիքային միավորով, նախկին 2 ստորաբաժանման 15 հաստիքի փոխարեն: Վարչությունը բաղկացած է լինելու երկու բաժիններից՝ Երեխաների պաշտպանության բաժին, որտեղ առկա են լինելու հետևյալ հաստիքները՝ բաժնի պետ, երեք գլխավոր մասնագետ (սոցիալական աշխատող, իրավաբան, հոգեբան), երկու առաջատար մասնագետ, որոնցից մեկը սոցիալական աշխատող ու մեկ առաջին կարգի մասնագետ և Սոցիալական պաշտպանության բաժին, որտեղ նույնպես հաստիքները ձևավորվելու են նույն սկզբունքով:

Հարկ է նշել, որ համակարգի փոփոխման նպատակը կայանում էր հենց նեղ մասնագետների ներգրավումը, որը կարող է դառնալ սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ աշխատանքի գրավական:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի
N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

	Առաջարկության, առարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով	<p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի «Սոցիալական ապահովության վարչություն»-ը ու «Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին»-ը լուծարել և ստեղծել նոր «Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն» և այդ կապակցությամբ «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «1. Վարչություններ» գլխի 14-րդ կետի «Սոցիալական ապահովություն վարչություն» բառերը փոխարինել «Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն» բառերով:</p> <p>Սոցիալական բաժինների լուծարման և նորերի ստեղծման գործընթաց նախատեսել նաև վարչական շրջաններում համապատասխան բաժինների աշխատակիցների կողմից վերապատրաստում անցնելուց հետո:</p>	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ